

ՐԱՍԱԶՈՒՅԻՆԻ ԼՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ

ՆԱԶԱՐԸ, ՓԱՆՈՍԸ ԵՒ ՈՍԿԵԱՅ
ԹԱԹՈՒԼԸ ԱՆՈՒՇ
ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ



Վերջերս լոյս տեսան Յովհաննէս Թումանյանի «Քաջն Նազար», «Չախորդ Փանոսը» եւ «Ոսկիի Կարասը» մանկական գիրքերը, ինչպէս նաեւ «Թաթուլ եւ Տուրիլի» եւ «Նորիչ Զարեանցի» «Ես իմ անուշ Հայաստանի» պատանեկան գիրքերը:

Երբեք հեքիաթները պատրաստուած են մանկավարժական մօտեցումով... Բայց եւ այնպէս երբեք գիրքերն այլ թերաւարտ են: Այսինքն՝ պատմութեան կողքին տեղ գտած իւրաքանչիւր էջի գծանկարները կը կարօտին մանկական ճարտար ձեւերու եւ գոյնգոյն ներկերու, որպէսզի կարելի ըլլայ խմբագիր-մանուկ ընթերցող կապը յառաջանելու եւ այդ ձեւով գիրքի ամբողջ փայլանութեան մասնակից դարձնել փոքրիկ ընթերցողը: Իսկ այն մանուկները, որոնք դժուարութիւն ունին գոյններու ներդաշնակութիւն ստեղծելու, կը բաւէ, որ գիրքին ետեւի կողքին նային եւ նախաձայնակ մը ունենան իւրաքանչիւր գծանկարի գոյներէն:

Հրատարակուած գիրքերու այս շարքը զազաթնակէտին կը հասնի «Ես իմ անուշ Հայաստանի» գիրքով: 14 էջերէ բաղկացած այս գիրքը անշուշտ միայն Նորիչ Զարեանցի համառուն բանաստեղծութիւնը չի բովանդակեր, այլ անոր իւրաքանչիւր տողին վերելուծումն ու անոր առնչուող պատմական, գրական թէ՛ մշակութային գիտելիքներ կը փոխանցէ: ան պատկերազարդուած է հայ տաղանդաւոր գեղանկարիչներու գործերով:



տարակնութեան հետ Լիբանանի մէջ, արեւմտահայերէնով հրատարակեց նշեալ հինգ գիրքերը: Հրատարակչական մարզին մէջ Համագայտիւն-հայրենի հրատարակչատուներ գործակցութեան առաջին մանկապատանեկան ձեռնարկն է: Կարելի է ըսել, որ թէ՛ իբրեւ գործակցութիւն եւ թէ՛ իբրեւ հրատարակութիւն յաջողութեամբ պսակուած է նշեալ նախաձեռնութիւնը եւ իբրեւ այդպիսին դուրս կը բանայ նման այլ հեռանկարներու: Այս որակաւոր հրատարակութիւններէն, Թումանյանի մեզի ծանօթ



ձեւով գիրքի վերածուած մէկ բանաստեղծութիւնը կը դառնայ ցուցադրութեամբ մը, պատանին հարստացնելով ընդհանուր գիտելիքներով: Ողջունելի նախաձեռնութեան մը արգասիքն են հինգ գիրքերն այլ: Անոնց լոյս տեսնելը կը հարստացնէ տակաւին ճղճիմ վիճակի մէջ գտնուող մանկական ու պատանեկան հայ գրականութեան այժմէական գանձարանը: Հինգ գիրքերն այլ ամբողջ արժանաւորութիւնն են ինչու չէ՞ դպրոցական օրերուն դասագիրքերու կողքին հաճելի եւ օգտաշատ ժամանց են: Նկատի ունենալով, որ առաջին եւ դժուար քայլը առնուած է, հետեւաբար մեզի կը մնայ ակնկալել եւ ունենալ մանկական ու պատանեկան գիրքերու հարուստ գանձարան, կարճ ժամանակուան ընթացքին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹՈՒՄՆ ԱՆԴՐԱԴՐՁ

Իրանի ներքին ու արտաքին քաղաքական ձեւաւորուած դաշտը անցնող շաբաթուան ընթացքում գրեթէ զրոյացուած միմեանց փոխակապակցուած, որտեղ իրանի իշխանութիւններն ու քաղաքական շրջանակները ստիպուած՝ երկու ուղորտներում էլ դիմագրաւեցին համապատասխան սպառնալիքներն ու դժուարութիւնները:

Անցնող շաբաթուան ողջ ընթացքում իրանի եւ միջազգային քաղաքական շրջանակներու ուշադրութիւնը կենտրոնացուեց այսպէս ասած՝ իրանի ուսանողութեան եւ թեհրանի ու միջազգային քաղաքներին մէջ կայացած «ցոյցերին» ու հանրահաւաքներին եւ դրանցից բխող հակադարձութիւններին, որոնց արդիւնքում պատահող դէպքերը բնութագրուեցին որպէս խառնակչութիւն:

Սկզբում թեհրանի միջազգային համայնարաններին հանրակացարաններին շրջակայքում կազմակերպուած հաւաքները իւրովի մեկնաբանութիւններին տեղիք տուեցին. ոմանք դա բնութագրեցին հակաիշխանական (արտաքին եւ ի մասնաւորի Ամերիկայի կողմից դիտուած), ոմանք ուսանողութեան դժգոհանքը համարեցին լոկ ուսումնական-արհեստակցական պահանջների արտայայտութիւն եւ դրսեւորում՝ նրանում չտեսնելով քաղաքական որեւէ ենթամթերք: Խնդիրն աւելի բարդ կերպարանք ու ընթացք ընդունեց, երբ իբր այդ ցոյցերին ընդդիմացող «մուսթ ուսթերն» ու այսպէս կոչուած՝ բունաճնչիները հրապարակ իման, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար իւր էին լցնում այդ կրակի վրայ աւելնող եւ թեհրեւս քաղաքականապէս բորբոքելով ուսանողութեան հասարակական արդար պահանջներն ու կրքերը: Իսկ սրանց հետեւանքով անխուսափելի էին դառնում անախորժ բախումներն ու անհանդարտ քաջբռնկները:

Այս պայմաններում նաեւ անխուսափելի էր դառնում կարգապահական ուժերի միջամտութիւնը, որն սկզբից եւ թէ՛ ունեցաւ ոչ թէ՛ դիմադրութեան եւ ճնշման, այլ կացութիւնը կառավարելու վերահսկելի դրոճները ընթացք, որն այսպէս թէ՛ այնպէս՝ չի եղել նախկին ընմանօրինակ դէպքերում (1999 թ. ամառ):

Ինչպէս յետոյ արդէն պարզուեց, խռովութիւններին բորբոքման հիմնական պատճառը համարուեց բունարտաքին իրականացնող խմբակցութիւններին անպատասխանատու եւ ինքնագլուխ գործունէութիւնը, որի դէմ էլ ուղղուեցին զխառնարարը պահանջական եւ կարգապահական ուժերի վերահսկողական քայլերը: Ձերբակալուեցին խոշոր տոկոսով նմանօրինակ խառնակիչներ, ընդ որում եւ յայտնի մտաւորական-քաղաքական գործիչ Սալիտ Նաճաբանին (բարեկարգչական) տեւորի ենթարկած Սալիտ Ասկեբաբը, որը չգիտես սր մուսթ ուսթերի նեցուկով, համայնարաններին շրջակայքում ազատ-համարձակ շրջում էր իր խմբակիցներով ուսանողութեան հետ հաշտեցնող կատարելու համար:

Երկրի իշխանաւորներին կողմից եւս, տրամաբանական եւ հաւասարակշիռ կեցուածքի շնորհիւ սոյն ցոյցերը եւ բախումները գնալով աւելիով վերահսկելի կերպով:

պարանք ընդունեցին, երբ նոյնինքն հոգեւոր առաջնորդ Խամենէյին իր կոչերից մէկում յատկօրէն յայտարարեց, որ ժողովրդական ուժերը հեռու մնան խրտուամների մէջ ներքաշուելու դաւադրութիւնից: Միւս կողմից՝ խորհրդարանը եւ բարեկարգչական-իշխանական եւ որոշ դէպքերում պահպանողական հոսանքներին ներկայացուցիչները իրենց կոչերով ու ելույթներով զգոնութեան էին հրաւիրում միջամուխ բոլոր կողմերին՝ կացութիւնը առաւել եւս չբորբոքելու եւ յատկապէս արտաքին քաղաքականութիւնները դիմագրաւելու առումով: Թեհրեւս այս մղումից ելած՝ կրկին ներքին համերաշխութեան եւ միասնականութեան կոչերը յաճախակիօրէն դրսեւորուեցին թէ՛ պահպանողական, եւ թէ՛ բարեկարգչական թեհրի կողմից, որոնք, սակայն, մէկ հարցում որդեգրեցին աւելի ընդգծուած միասնական կեցուածք, որը վերաբերում էր պղտոր ջրից ձուկ որսացողներին՝ բունաճնչիներին զսպմանն ու կանխարգելմանը, որոնց ընթացքից առհասարակ խորշում է ժողովուրդը:

Ներքին իրադարձութեան յատկանշական երեւոյթ էր նոյնինքն խորհրդարանի խօսնակ Քեառուպի պահանջը՝ անվտանգութեան եւ տեղեկատուութեան նախարար Իւնեսիին ուղղուած, որի համաձայն՝ վերջինք պահանջել է, որ հետապնդուի եւ պարզաբանուի վերջերս ուրբաթօրեայ հասարակաց աղօթքի ընթացքում Մեսայահ Եագտիի (պահպանողական) այն հրապարակումը, ըստ որի՝ իշխանութեան մի շարք պատասխանատուներ կաշառուելով ամերիկեան տուլարներով (500 միլիոն տոլար) նպատակադրել են փրկուել իսլամական համակարգը: «Եթէ սոյն խնդիրը չպարզաբանուի, խորհրդարանը հարցապնդման կ'ենթարկի նախարար Իւնեսիին...», ընդգծել է խօսնակ Քեառուպիին:

Ինչպէս ասուեց, քաղաքական ներքին խմորումները եւ այս դէպքում «ուսանողական գործօնը» չարաշահեցին Ամերիկայի վարչակազմի կողմից եւ աւելին՝ Ամերիկան պաշտօնապէս յայտարարեց, որ հովանաւորում է «ուսանողութեան շարժումը»:

Միւս կողմից՝ Ամերիկան նաեւ ու մանաւանդ իրանի դէմ իր ճնշումները սաստկացրեց՝ հարցականի տակ առնելով իրանի միջուկային արհեստագիտութեան անվտանգութիւնը: Այս հարցում Մ. Նահանգները չբաւարարուեցին իրենց ճնշումներով, այլ հակիրան կեցուածք որդեգրելու պահանջներ ներկայացրեց Եւրոմիութեանը, Ռուսաստանին եւ մինչեւ իսկ Աթոմական Միջազգային կազմակերպութեանը, որ յիշեալները եւս համապատասխան քայլեր կ'իրագրեն այդ հարցի գծով:

Ներկայումս իրանի արտաքին քաղաքականութեան ու զիւսանողութեան համակարգը լուրջ եւ հետեւողական ջանքեր է ի գործ դնում Մ. Նահանգներին եւ գնալով միջազգային տարողութիւն ընդունող ճնշումները դիմագրաւելով՝ նուազագոյնի հասցնելու համար հակիրան ճգնաժամը:

Գ. Մ.

21 Յունիս 2003
«Ալիք» օրաթերթ

ՑԵՂԱՍՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ՀԵՏԱԳՆԴՈՒՄՆԵՐԷՆ ԱՌԱՋԻ ԵՒ ՎԵՐՋԻ ՄԱՍԻՆ

Քառասուն տարինեղէ ի վեր շրջապագեթուած պայքար յաջողութիւններն արձանագրած է: Հայկական Հարցը այլեւս տոկոս արխիւային իրութիւն է: Մասնաւորապէս եւ ծափահարութիւնը, որպէսզի դրական ըլլանք: Բայց ազգ մը կամ ազգային հաւաքականութիւն մը, այս պարագային՝ Հայկական Սփիւռքը, ցեղասպանութեան գանձարանը բնոյթի ճանաչումներէն առաջ եւ վերջ, ունի՞ հիմնահարցեր, որոնցմով կը պայմանաւորուի նոյնինքն այդ ճանաչման այսօրուան եւ վաղուան յաջողութիւնը:

Հայաստանի վերանկախացումը որտեղ քաղաքականութիւնն են մանաւանդ արագացումը ստուշ Հայկական Հարցին: Եթէ որոշ դռներ չեն բացուիր համայնքներու կամ յանձնախումբերու առջեւ, անոնք կը բացուին պետութեան առջեւ: Բնական է, որ խօսուի այս յաջողութիւններու մասին, բայց անոնք պէտք չէ մոռցնեն այն բոլոր հիմնարար աշխատանքները, որոնք կարելի կը դարձնեն հետապնդումը, նաեւ հարկ է խօսել, թէ ի՞նչ է նկատաւոր ցեղասպանութեան, ո՞ր կ'ուզենք հասնել: Երկարունջ պայքարի համար անհրաժեշտ են կառուցներ, նախաձեռնութիւններ, որպէսզի ճանաչման մը հետապնդումը անսկիզբ եւ անվախճան խանդավառութիւններու եւ կամ յուսալքութիւններու առիթ չըլլայ:

Բնական է, որ Հայ Դատի աշխատանքը կը պահանջեն ժամանակի ողիմ գործողներ, արդի հաղորդակցութեան տիրապետողներ, բայց կենսական է, որ անոնք ունենան ենթահողը, Ֆրանսացիները կը խօսին baseի մասին, ամերիկացիներ, մեզի պէս, աւելի ճշգրիտ են, կ'ըսեն՝ background: Ցեղասպանութեան ճանաչման հետապնդումը, առանց ենթահողի, որ Հայ Դատն է, յաջողակ է հրապարակութիւններու առիթ կրնայ ըլլալ, ոչ ազգային հեռանկար: Այս ըմբռնումով է, որ հարկ է դառնալ դէպի Հայ Դատը, իբրեւ ազգային ռազմավարութիւնը խտացնող արտայայտութիւն: Ան կը նսեմանայ, եթէ զայն վերածենք իր նուազագոյնին, Ցեղասպանութեան ճանաչման կարգապահ, ներազգային ճակատի վրայ են անբաւարար է, հայ զանգուածը չի տրամադրեր տոկայալ եւ տեւելու, որպէսզի սէր մնայ իր դատին, իրաւունքներուն:

Հայ Դատը հայրենասէրներու եւ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդի մը իրաւունքներու ճանաչման եւ վերականգնման պայքարն է: Անկէ ետք կը սկսին քաղաքական ճառը, դիւստապիտական աշխատանք, ի հարկին՝ ազատագրական պայքարը: Որպէս-

Հ. ԱՒԵՏ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Աստուծոյ ապաւինելով՝ 2003 - 2004 տարեշրջանի սկզբնական արձանագրութիւնները, նախկին եւ նոր աշակերտներու համար, սկսած են եւ կը շարունակուին մինչեւ 31 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 1:00 (բացի Ծաբաթ եւ Կիրակի օրերէն): Օգոստոս ամսուան ընթացքին գրասենեակը բաց է միայն Չորեքշաբթի օրերը ժամը 8:30էն 12:00:

Նորեկ աշակերտներն կը պահանջուի՝ ա.՝ Վերջին երկու տարուան վիճակագրոյցը. ինքնուրոյն թուղթի լուսապատճեն գ.՝ Երկու նոր լուսանկար դ.՝ Բարի վարքը վկայագիր ե.՝ Նախկին վարժարանէն աշակերտին պետական թիւը՝ վաւերացուած:

ՎԵՐԱՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ տեղի պիտի ունենան առաւօտեան ժամը 10:00ից: ●Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2003 - Լեզուական Գիւթը ●Շինգալաբի, 18 Սեպտեմբեր 2003 - Թուրքական Գիւթը ●Ուրբաթ, 19 Սեպտեմբեր 2003 - Պատմութիւն, աշխարհագրութիւն եւ այլ Գիւթեր

ՎԵՐԱՍՈՒՏ ա.՝ BREVET եւ BACC II Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2003 ր.՝ Երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարան - Չորեքշաբթի, 1 Շուկտեմբեր 2003 գ.՝ Սանկապարտուգ - Շինգալաբի, 2 Շուկտեմբեր 2003 Կարի ունենալ հետեւեալները: Գրախաճուրդ բաց է Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր 2003էն սկսեալ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԾՆԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒՄՆԵՐԸ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային)՝ անախուսափաբար պայտուցակա թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ Գերկապուցել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ՆԱՍԱԿ՝ ԸՆԴՈՒՆՄԵՆ

ՇՈՒԿԱՅԻ ԽՂՈՒՆ

Հացին գինը Հայաստանի մեջ տակալին բարձր է, նախորդ ամիսներուն համեմատությամբ՝ շուրջ երեսուն տոկոսով բարձր: Տասնեակ հազարաւոր կենսաթոշակառուներու համար, որոնց ստացած ամսականը արդէն հազիւ հացին կը բաւէր, ասիկա ուղղակի աղէտի համագոր հարուած է: Զանգուածային ու ցուցական որեւէ բողոքի արտայայտութիւն չենդա երկրին տարածքին: Բողոքն ու ընդվզումը այստեղ կը սահմանափակուի դրացիներու ու ծանօթներու միջեւ փոխադարձ արտուցեցնելով, իշխանութեանց ու անոնց հովանաբան տակալատող մաֆիայի հասցեէն ուղղուած ամէնէն գուճաւոր հայրնայններով ու, ի վերջոյ, հազարամեակներու փորձով ձեռք ձգուած համակերպումի կեցուածքով:

Այս օրերուն ալիւրին գինը արդէն նախկին մակարդակին իջեցնելու միտում ցոյց կու տայ, ու հաւանաբար անոր հետեւի նաեւ հացինը: Ինչո՞ւ գիները սղեցան ու հիմա ինչո՞ւ սկսած են իջնել՝ մեզի նման հասարակ մահկանացուներու համար կը մնայ անշուշտ անվերծանելի խորհուրդ: Տնտեսագետները անշուշտ կրնային տրամաբանական պատասխաններ գտնել այս հարցին, եթէ հասու ըլլային որոշ տեղեկութիւններու, մաքսային վարչութեան մօտ արձանագրուած տուեալներու: Երկիրներածուած ցորենի ու ալիւրի չափին, երկրին մէջ գոյութիւն ունեցող կամ չունեցող պահեստներու մէջ առկայ քանակին վերաբերեալ:

Շուկան պիտի ճշդէ հացին ու ալիւրին գինը, կ'ըսեն իշխանութեան վերին ոլորտներու մարդիկ: Հետեւաբար դրամափոխական համակարգը իր ամբողջութեամբ ու անվերապահօրէն որդեգրած մեր հանրապետութեան քաղաքացիներուն կենսական կարիքներուն պահովումը կը ձգուի շուկայի խղճին: Մեր պարագային, այս շուկայական կարգաւորման տրամաբանութիւնը քիչ մը նուազ համոզիչ կը թուի, պարզապէս որովհետեւ այստեղ ցորենի եւ նման կենսական այլ սննդամթերքի ներածումը տարբեր, ոչ օրինական միջոցներով մեծաշնորհեալ դարձած գործ է, ուրեմն՝ ամբողջովին անհակակշռելի ու կախեալ փոքրաքիւ մարդոց կամքէն ու քմայքէն:

Յատկանշական է, որ Արցախի մէջ իշխանութեանց կողմէ փորձ եղաւ առնուազն ժամանակաւորապէս պահելու նոյն գիները պետական պահեստային ալիւրի շուկայ իջեցնում նամբով: Ուրեմն, եթէ պետական կուի գիներու նուազման միտումը, Արցախի իշխանութիւնները յաջողած կ'ըլլան խնայելու իրենց քաղաքացիներուն: այն սղութեան պահուն ցաւերն ու մտահոգութիւնները: Սակայն, անշուշտ, Արցախի պետական միջոցները շատ քիչ են երկարատեւ միջամտութեան համար ու այսօր արցախցիք, Հայաստանի քաղաքացիներուն նման, կ'ապրին անորոշութեան տագնապը:

Աղքատութեան դեմ պայքարի լոզունգով աշխատանքի սկսած նոր կառավարութեան հաւանաբար շուտ է դեռ այսպիսի խնդիրներու համար ժողովուրդի օգտին որոշումներ կամ գործնական քայլեր ազնկալել, բայց այս օրերուն է, որ շատ հարցեր պետք է լուծուին:

Արդարեւ, ցորենի հունձքին համար հաշուուած օրեր մնացած են: Այս տարի բերքը լաւ է, որ հազարաւոր գիւղացիներ յոյսը կապած են իրենց բերքը արդար գինով վաճառելուն: Այսօր, սակայն, անոնք խիստ անհանգիստ են ու կը վախճան խաղի բերուի ցորենի վաճառակցներուն կողմէ: Նոյնիսկ այս օրերուն հացի ու ալիւրի գիններուն նուազման փաստը անոնք կը նկատեն վաճառակցներու որդեգրած ճարտիկ մարտավարութեան արդիւնք, որպէսզի կարեւոր աժան գներ գիւղացիներուն ցորենը եւ հունձքի աւարտին վերստին բարձրացնելու գիները:

Գիւղացին ոչ մէկ կարելիութիւն ունի պայքարելու այս անորոշութեան դեմ: Պահեստները, եթէ կան, իրեն անմատչելի են, իսկ ինք կամ պարտքով հասած է հունձքի օրերուն եւ, հետեւաբար, անմիջապէս գումարի պէտք ունի բարձր տոկոսներէ խուսափելու համար, կամ ալ ունի ընտանեկան անյետաձգելի կարիքներ, որոնց պէտք է միջոցներ հայթայթէ. գաւազը բանակ ուղարկելու, յետաձգուած, բայց անհրաժեշտ գներով ընելու, դպրոցական շրջանին նախապատրաստուելու, եւ, ինչ որ ամէնէն կարեւորն է, յառաջիկայ ցանքին համար կարելիութիւն ստեղծելու: Հետեւաբար վաղը, միւս օրը, ցորենի վաճառակցը ինք պիտի ճշդէ գինը ու գիւղացին պարտադրուած պիտի ենթարկուի անոր որոշման:

Դաժան է դրամատիրական շուկայի տրամաբանութիւնը, մանաւանդ երբ թոյլ են ու անկազմակերպ: Այս մասին գրած եմ անցեալին ու կը վերահաստատեմ, որ գիւղացին կը մնայ ամէնէն անպաշտպան խաւը ու անոր քրտինքին արդիւնքը կրնայ փոշիանալ քանի մը հոգիներու շահադիտական մօտեցումներուն պատճառով:

Հիմա պատասխանատու պահ մըն է բոլոր դաշնակցականներու եւ մեր կուսակցութեան համար, որուն ուսերուն դրուած է գիւղացիութեան բարօրութեան եւ ընդհանրապէս գիւղատնտեսութեան գարգացման պարտականութիւնը: Շուկայական ուժերու կարգաւորման արդարացումը, կը կարծեմ, գոնէ մեզի համար ընդունելի տարբերակ է:

ԱՐՈ ՊՈՂՈՒԿԵԼՆ

ԱՉԳԱԿ

ԼՈՒՐԵՐ՝ ԸՆՅԱՁԽԱՐԸՆ - ԼՈՒՐԵՐ՝ ԸՆՅԱՁԽԱՐԸՆ - ԼՈՒՐԵՐ՝ ԸՆՅԱՁԽԱՐԸՆ

ԱՐՏԱՇԱՏ ԵՒ ՔԼԱՄԱՐ՝ ՔՈՅՐ ՔԱՂԱՔՆԵՐ

Փարիզի մերձակայ Բլամար քաղաքի եւ Արտաշատի քաղաքացիներ Ծ. Քալթէնպախ եւ Գ. Մուրատեան վերջերս երկու քաղաքներուն միջեւ եղբայրացման յուշագիր մը ստորագրած են:

Այս առիթով կազմակերպուած հանդիսութեան ներկայ գտնուած Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպան Է. Նալպանտեան իր արտասանած խօսքին մէջ ըսած է, որ Բլամար եւ Արտաշատ կու գան աւելցնելու վերջին տարիներուն ընթացքին Հայաստանի եւ Ֆրանսայի քանի մը տասնեակէ աւելի քոյր քաղաքներու, աւաններու եւ քաղաքացիներու շարքերը, որոնք կը կազմեն երկու ժողովուրդներուն միջեւ մարդկային շփումներու եւ բարեկամութեան կարեւոր սիւներէն մէկը:

ՆԱՑԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՔԱՆԴԱԿ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՇՈՒՆՉՈՎ

Փարիզաբնակ հայազգի քանդակագործ Դաւիթ Երեւանցին, որուն երկու տասնեակէ աւելի ստեղծագործութիւնները կը գարդարեն Երեւանը, Փարիզը եւ Փրական, ներկայիս կ'աշխատի Ֆրանսական կառավարութեան կողմէ պատուիրուած նոր քանդակի մը վրայ:

Այս քանդակը պիտի նուիրուի Համաշխարհային Բ. Պատերազմին ընթացքին Ֆրանսայի կողմէ նացիական նուաճեան դէմ տարուած յղթանակին: Երեք մեթր բարձրութիւն ունեցող քանդակը իրբեւ ներշնչման նիւթ ունի Ֆրանսացի բանաստեղծ եւ մարդասէր Լուի Արակոնի ստեղծագործութիւններէն մէկը:

Քանդակը կը ներկայացնէ մայրը եւ աղաւնին իր ձեռքերուն մէջ պահող մանուկը՝ իրբեւ խաղաղութեան խորհրդանիշ: Ան պիտի տեղադրուի յառաջիկայ տարւան Սեպտեմբերին, Փարիզի զբօսայգիներէն մէկուն մէջ:

Յիշեցնենք, որ Դաւիթ Երեւանցիի Փարիզի մէջ կանգնեցուած վերջին գործը Կոմիտասի յուշարձանն էր, որուն բացումը տեղի ունեցած վերջերս:

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ՅՈՒՑԱՀԱՆ ԴԷՍԸ՝ ՄԻՆՍՔԻ ՄԷՋ

Մինսքի լաւագոյն արահներէն մէկուն մէջ հանդիսաւորապէս բացուած է մինսքաբնակ գեղանկարիչ Գրիգոր Դանիելեանի ստեղծագործութիւններուն անհատական

ցուցահանդէսը: Գեղանկարիչը գայն նուիրած է Պիեթրուսիա - Հայաստան դիւնապիտակաւ յարաբերութիւններու 10ամեակին: Ցուցահանդէսին ներկայացուած էին Գրիգոր Դանիելեանի վերջին տարիներու աշխատանքները:

Գրիգոր Դանիելեան, որ կը ներկայացնէ հայ նկարիչներու միջին սերունդը, ծնած է Թիֆլիս, ուր ստացած է իր մասնագիտական կրթութիւնը եւ մասնակցած է ցուցահանդէսներու:

ԿՈՒՉՈՒԻ
●DIMA վաճառատունը կարիք ունի վաճառող օրհորդի մը: Դիմել՝ հեռ. 03-340025 թիւին:

ԿՈՒՉՈՒԻՆ
●Դեղագործներ, ինքընտրով եւ հեռաձայնով աշխատողներ, եւ ծախողներ՝ 20ԵՆ 50 տարեկան: Դիմել՝ հեռ. 03 - 432615:

ԼԱԹՎԻՈՅ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Ոչ պաշտօնական տուեալներու համաձայն, ներկայիս Լաթվիոյ մէջ կ'ապրի 5000 հայ, իսկ այդ երկրի վիճակագրութեան մասնագէտները կը նշեն 3500 թիւը: Ինչպէս Լաթվիոյ մէջ ընակող միւս օտարերկրացիներուն, նոյնպէս այլ հայերուն համար բաւական բարդութիւններ կան: Լաթվիոյ մէջ օտարերկրացիները դժուարութեամբ քաղաքացիութիւն կը ստանան, իսկ «ոչ քաղաքացի» կարգավիճակ ունեցողները զրկուած են ընտրութիւններուն մասնակցելէ, չեն կրնար աշխատիլ պետական հիմնարկներու, ինչպէս նաեւ այլ ծառայութիւններու մէջ, օրինակ՝ հրէջք, բժշկութիւն եւ այլն:

Հակառակ այս դժուարութիւններուն, Լաթվիոյ հայ գաղութը, որ մեծագոյնն է մերձկալթեան երկիրներուն մէջ, կրնայ իրականացնել համագաղութային ազգային խնդիրներ: Այնտեղ բնակող հայերուն շարքին կան մտաւորականներ, որոնք պետական յարգանք կը վայելեն:

Գաղութը իր կարելիութեան չափով կ'անդրադառնայ հայութեան պատմութեան եւ ներկային: Այսպէս, Հրանդ Մաթեոսեանի նուիրուած երեկոյ մը տեղի ունեցած է, դաշնակաւոր փրոֆ. Բաֆֆի խորաշնչանքի ջանքերով կազմակերպուած է հայկական երաժշտութեան տասնօրեայ լաթվիոյցի եւ լիթուանացի երաժիշտներու մասնակցութեամբ: Ամիսը մէկ անգամ տեղական ձայնասփիւռի կայանով կը սփռուի կէս ժամնոց մշակութային յայտագիր մը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ «ԱՐԱՐԱՏԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՄԵՐԻԿԱ»

«Արարատէն մինչեւ Ամերիկա» խորագիրը կը կրէ Կլեմէնտի մէջ բացուած հայ նկարիչներու ստեղծագործութիւններուն ցուցահանդէսը: Ըստ «Կլեմէնտի Նիուզ Փրէս» ամբիկեան թերթին, ցուցահանդէսը արժանացած է ամերիկացի արուեստասէրներու եւ քննադատներու ուշադրութեան՝ որպէս լույս «անհայտը» հաւաքածոյ:

Ցուցահանդէսին ներկայացուած են Մարտիրոս Ատախեանի, Բաֆֆի Ատախեանի, Վլադիմիր Աբրահեանի, Վահէ Պերպերեանի, Սամուէլ Համբարձումեանի, Նարինէ Իսաջանեանի, Զատիկ Զատիկեանի, Սուրէն Կարապետեանի եւ այլոց գործերը: Ցուցադրութիւնը պիտի շարունակուի մինչեւ Յուլիսի կեսերը:

ԳԻՄՈՒ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԿ ՄԱՍԸ ԿԸ ՓԼԻ

«Նոյեան Տապան» լրատուագրութիւնը կը հարգուի, որ 19 Յունիսին փլուծ է Գրիգորի «Կուսարի» արդեւանոցային տարածքին մաս կազմող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ արեւմտեան թեւը: Եկեղեցին կառուցուած է 19րդ դարու երկրորդ կիսուն եւ յայտնի է «Գողցոց ժամ» անունով:

Պատմաճարտարապետական մեծ նշանակութիւն ունեցող այս կառուցը մեծապէս տուժած էր 1926ի երկրաշարժէն, իսկ 1988ի արհաւիրքէն ետք զարձած է խիստ վտանգուած, սակայն յաջողած տարիներուն եկեղեցւոյ վերանորոգման աշխատանքներ չէին կատարուած:

www.aztagdaily.com

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԵԴ ԲԱՆԹԱՐԻ, ՊԵՅՐՈՒԹ, ՀԵՌ. 349816 2003 - 2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ

- 1.- Եայ Աւետարանական քոլեճը ունի բողոքեցն մինչեւ Բ. պաքաւորտ դասարան:
- 2.- 2003 - 2004 տարեշրջանի նախնական արձանագրութիւնները արդէն իսկ սկսած են հիմն եւ նորեկ աշակերտներու համար:
- 3.- Նորեկ աշակերտներու դիմումագրութիւնները կ'ընդունուին ամէն օր, երկուշաբթին Ուրբաթ, կէսօրէ առաջ 9:30 - 12:30:
- 4.- Վերանմուտ՝ 1 Շոկտեմբեր 2003:

Նորութիւններ

- »Շ. Ա. Է.ի 80ամեակի առթիւ կրթաթոշակի յատուկ սակեր
- »Բացառիկ զեղչեր նորեկ փայլուն աշակերտներու
- »Բոլոր շրջաններու համար օթոպիւսի սպասարկութիւն
- »Վճարման դիւրութիւններ

Եայ Աւետարանական քոլեճ, Մեքսիք փողոց, Զամբար, Եայկազեան համալսարանին կից, «Թրատ» հիւանդանոցին դիմաց:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ



FUEL CARDը գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ գանոնք լուալու պարագային: Երբ մագուիթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶MANAR - Տորա
- ▶ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Գամուտ
- ▶BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶AKEL եւ BASSIL - Տորա, «Քրեոսի Լիպանէ»ի մօտ
- ▶SPEED - Գանքաշ, Կալիի հօթիլա
- ▶ԳՍԳՎՎԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազ»
- ▶MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶MALLAH - Գարեթ Ղաուարնէ
- ▶MALLAH - Պալիմ
- ▶MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶CORAL - Էլբեքի, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶SAAD - Մար Միայել
- ▶SPEED - Նահր, «Փեօօ» ընկերութեան մօտ
- ▶PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶MALLAH - Պապալոթ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՐԳԵՐ

Լիբանանեան կեանքի երևոյթներ

«ԷՍԵՈՒԱ»Ի ԿՈՐԱԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԿԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԸԱՄԱՁԱՅՆ

ԱՆՈՒՍ ԱՐԱՔՆԵՐՈՒՆ ԹԻՒՐ ԿԸ ՀԱՄՆԻ 68 ՄԻԼԻՈՆԻ, ԻՍԿ 11 ՄԻԼԻՈՆ ԱՐԱՔ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՐԲԵՔ ԴՊՐՈՑ ՉԵՆ ՅԱՃԱԽԱԾ



Դարու սրբնաբան գարգացումներուն եւ մայնորեայ դրուժեամբ արձանագրուող նորութիւններուն հակառակ, վերջին տարիներուն «ԷՍՔՈՒԱ»ի կողմէ արարական աշխարհին մէջ կատարուած վիճակագրութիւնը ցոյց տուած է, թէ այս երկիրներուն մէջ տակաւին առկայ է սեռերուն միջեւ խտրականութեան պատճառով ուսման մակարդակի գոյացման տարբերութիւն:

Դրան հակառակ վրայ: Այս ձեւով մտածող երկիրներուն մէջ այս կեցածքը կը փոխանցուի սերունդէ սերունդ եւ ոչ մէկը կը զգայ, թէ արհեստագիտական զարգացումներով լեցուն դարու պէտք է իրենք եւս բարեփոխուին իրենք եւ զէջնախակրթութիւն տան իրենց նոր սերունդներուն:

ՄԱԿԻ կողմէ կատարուած ուսումնասիրութեան մը համաձայն, այսօր գարգացող երկիրներուն մէջ կան 113 միլիոն մանուկներ, որոնք բնաւ դպրոց չեն յաճախած, մասիտ չեն բռնած եւ ոչ ալ գիրք բանալու առիթ ունեցած են: Ըստ տեղեկութիւններուն, այս թիւին 50 տոկոսը կը պատկանի Եւրոպայի եւ Եւրասիայի միջին եւ արեւելեան աշխարհի կարծազմ երկրներուն մէջ, եւ անոնք ուժեղ նորէն կառուած կը մնան իրենց «աւանդական» սկզբունքներուն եւ համոզումներուն ու տակաւին կը հաւատան, որ իրական սեռի պատկանողները պէտք չէ նոյնիսկ դպրոց երթան ու նախակրթութիւն ստանան:

Արարական իւրաքանչիւր երկիր ունի իր յատկ գործելաձեւեր եւ ուսման նկատմամբ իր կեցողութիւնը:

Վիճակագրութեան համաձայն, որոշ երկիրներ այս առնչութեամբ մեծ գարգացում արձանագրած եւ բաւական մեծ նուազումներ կատարած են, իսկ ուրիշներ ոչ մէկ ձեւով յառաջդիմած են, որովհետեւ կը նախընտրեն մնալ իրենց փակ սահմաններուն մէջ՝ հաւատարմով, թէ միշտ պէտք է կառուած մնալ աւանդական սովորութիւններուն, եւ վախճանաբար, որ եթէ որեւէ ձեւով փոփոխութիւն տեղի ունենայ կրնայ ազդել փոփոխութիւնը ու անոր ազ-

րնագաւառին մէջ սեռերու միջեւ խտրականութեան վերացման արշալիք մը ձեռնարկել եւ աշխատիլ յանուն բոլորին զարգացման:

2000 - 2001ի տուեալներով, այս արշալիքը որոշ ճամբայ մը կտրած է, մանաւանդ՝ որոշ երկիրներու մէջ, ուր այդ խտրականութիւնը ամբողջովին վերացուած է պետութեան կողմէ, հակառակ անոր որ ծնողներուն մօտ տակաւին այս մտածելակերպը տիրական է, իսկ ուրիշ պետութիւններ տակաւին արգելքներ դրած են իրական սեռին դիմաց՝ ուսում ստանալու:

«ԷՍՔՈՒԱ»ի կատարած ուսումնասիրութեան համաձայն, չորս արարական պետութիւններ՝ Սիւաբալի, Եմբուի, Բաթար, Բուրիանի եւ Պահար, զգալիորէն այս խտրականութեան համեմատութիւնը կրցան նուազեցնել, իսկ 10 այլ պետութիւններ, որոնց կարգին՝ Լիբանան, այս խտրականութիւնը ամբողջովին վերացուցին սեռերուն միջեւ, եւ փաստօրէն այսօր տղայք ու աղջիկները հաւասարապէս դպրոց կը յաճախեն: Այդ երկիրներուն մէջ ընդհանուր պայմաններու



դի մը: Սակայն պէտք է նշել, որ գրեթէ բոլոր երկիրները յառաջդիմութիւն արձանագրած են նախնական կրթութիւն տալու ծիրին մէջ, որովհետեւ համոզուած են, թէ աղջիկները եւս պէտք է գոնէ զբոյժուին ու ստորագրել գիտելիքներ ունենան: 20 պետութիւններէն 13ին մէջ նախնական կրթութիւն տալու տոկոսը կարգաւորուած է 80 առ հարիւր, իսկ միւս երկիրներուն պարագային անկա շատ աւելի է եւ հասած է նոյնիսկ 100 առ հարիւրի: Բայց այս երկրները եւս որոշ մասնաշրջաններ կը ստեղծէ, որովհետեւ գոյգ սեռերուն 100 առ հարիւր նախնական կրթութիւն տալու երեւոյթները գոյգ տեսքով:

Լիբանանի մէջ, սակայն, այս մտածելակերպը բարեբախտաբար նահանջած է: Ընդհանուր կան, մեծ թիւով ծնողներ կը հաւատան, թէ յաւ կրնա ըլլալու համար աղջիկ մը պէտք է ըլլայ նաեւ ուսումնական գարգացած: Սակայն, հակառակ ստոր, Լիբանանի մէջ ընդհանրապէս նուազած է համալսարանական ուսում ստացողներուն թիւը, որուն պատճառը տնտեսական ու ընկերային դժուար պայմաններն են: Չորս սեռերուն պատկանող երիտասարդները կը ստիպուին դպրոցը աւարտել ետք գործի լծուիլ ընտանիքին օժանդակելու համար, եւ այս երեւոյթը աւելի շեշտուեցաւ 15 տարուան քաղաքացիական պատերազմէն ետք: Մէկ գաւազի համալսարանական ուսում տալու կարելիութիւն ունեցող ծնողները շատ յաճախ կը նախընտրեն այդ առիթը տալ իրենց տղոց, քան՝ աղջիկներուն:

Հետաքրքրական է, թէ հակառակ անոր որ սեռերու միջեւ խտրականութիւնը տակաւին առկայ է արարական աշխարհին մէջ, սակայն ուսուցիչներուն մեծամասնութիւնը կը պատկանի իրական սեռին, եւ անոնք այսօր դպրոցներուն մէջ աւելի տիրական ներկայութիւն են, քան այրերը:

Մինչ արեւմտեան աշխարհի մէջ իրական սեռին պատկանող անհատները այսօր պետական պատասխանատու դիրքերու վրայ կը գտնուին, արարական աշխարհը շատ ցած մակարդակի վրայ կը գտնուի իրական սեռին բարձրագոյն ուսում տալու իմաստով: Այս մէկը կ'առնչուի ժողովրդային այն մտածելակերպին, որ տղաքը պէտք է ուսում ստանան լաւ ապագայ մը ունենալու համար, սակայն, ըստ անոնց, պարագան նոյնը չէ աղջիկներուն, որոնք նախակրթարան կամ լաւագոյն պա-



մէջ ապրող բոլոր մանուկներն ու պատանիները մինչեւ 15 տարեկան պարտադիր նախակրթութիւն կը ստանան, իսկ 15 - 24 տարեկաններուն երկրորդական եւ համալսարանական ուսում ստանալու պարագային, զգալի յառաջդիմութիւն արձանագրուած է մանաւանդ Լիբանանի մէջ:

Ըստ վիճակագրութեան, որոշ պետութիւններու մէջ 3 - 5 տարեկան մանուկները դպրոց չեն յաճախել, որովհետեւ քաղաքացիները ունին ընկերագրային եւ կարելիութիւնը չունին իրենց գաւազներուն ուսման ծախսը հոգալու, իսկ ուրիշներ, որոնք ծայրայեղ պահպանողական են, կը մերժեն իրենց գաւազները, մանաւանդ՝ իրական սեռի պատկանողները, դպրոց ուղարկել վախճանով թէ՛ առանձին փոխադրութեան եւ թէ՛ ուսուցիչներուն վարելակերպին ձգած ազդեցութեան: Այս «չափազանց գոբոբոբ» ծնողները չունին կարողութիւնը գիտակցելու, որ իրենք այս ձեւով իրենց գաւազները կ'առաջնորդեն իրենց զեպի շատ աւելի վտանգաւոր ու զժժարութիւններով լեցուն ու-

րագային երկրորդական յաճախելէ ետք պէտք է տունը մնան ու սպասեն իրենց «ճերմակ ձիաւորին»: Այս մէկը իրականացնելու համար մայրերը իրենց «համալսարանական» դասընթացը կը սկսին կիրարկել իրենց գաւազներուն վրայ եւ անոնց սորվեցնել «իտէալ կին» ըլլալու օրէնքներն ու գաղտնիքները: Այս պատճառով արարական գրեթէ բոլոր երկիրներուն մէջ համալսարանական տղոց թիւը երեքէն չորս անգամ աւելի է, քան աղջիկներունը:

Լիբանանի մէջ, սակայն, այս մտածելակերպը բարեբախտաբար նահանջած է: Ընդհանուր կան, մեծ թիւով ծնողներ կը հաւատան, թէ յաւ կրնա ըլլալու համար աղջիկ մը պէտք է ըլլայ նաեւ ուսումնական գարգացած: Սակայն, հակառակ ստոր, Լիբանանի մէջ ընդհանրապէս նուազած է համալսարանական ուսում ստացողներուն թիւը, որուն պատճառը տնտեսական ու ընկերային դժուար պայմաններն են: Չորս սեռերուն պատկանող երիտասարդները կը ստիպուին դպրոցը աւարտել ետք գործի լծուիլ ընտանիքին օժանդակելու համար, եւ այս երեւոյթը աւելի շեշտուեցաւ 15 տարուան քաղաքացիական պատերազմէն ետք: Մէկ գաւազի համալսարանական ուսում տալու կարելիութիւն ունեցող ծնողները շատ յաճախ կը նախընտրեն այդ առիթը տալ իրենց տղոց, քան՝ աղջիկներուն:

Հետաքրքրական է, թէ հակառակ անոր որ սեռերու միջեւ խտրականութիւնը տակաւին առկայ է արարական աշխարհին մէջ, սակայն ուսուցիչներուն մեծամասնութիւնը կը պատկանի իրական սեռին, եւ անոնք այսօր դպրոցներուն մէջ աւելի տիրական ներկայութիւն են, քան այրերը:

Մինչ արեւմտեան աշխարհի մէջ իրական սեռին պատկանող անհատները այսօր պետական պատասխանատու դիրքերու վրայ կը գտնուին, արարական աշխարհը շատ ցած մակարդակի վրայ կը գտնուի իրական սեռին բարձրագոյն ուսում տալու իմաստով: Այս մէկը կ'առնչուի ժողովրդային այն մտածելակերպին, որ տղաքը պէտք է ուսում ստանան լաւ ապագայ մը ունենալու համար, սակայն, ըստ անոնց, պարագան նոյնը չէ աղջիկներուն, որոնք նախակրթարան կամ լաւագոյն պա-

ՄԵՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները

ՍՈՅԱՆ ԵՒ ԲՆԱԹԵԼԵՐԸ

Սոյան ասիական ծագում ունի: Հարիւր կրամ սոյան կը պարունակէ քառասուն կրամ սպիտ (փրօթէին): Միսին մէջ գտնուող փրօթէինի քանակը հաւասար է սոյային մէջ գտնուող փրօթէինի քանակին, սակայն, սոյային մէջ գտնուող երկաթի քանակը աւելի նուազ է: Սոյա ուտելիքները ոչ միայն փրօթէին կը պարունակեն, այլեւ կրնան նաեւ պարունակել զանազան տարրեր, վիթամին Պէ-1, բնաթելեր (ֆայբրը) եւ հանքեր: Լուրջիայի ձեռով սոյաներ կրնանք գտնել, ինչպէս նաեւ քոլեւսթերոլէ եւ լաքթոզէ զերծ սոյա կաթ գոյութիւն ունի, որ շատ աւելի մարսողական է կովու կաթին, սակայն, աւելի նուազ քալսիում կը պարունակէ:

Սոյայով հարուստ ուտելիքները կը նուազեցնեն ոսկրափտութեան հիւանդութեան հաւանականութիւնը, ինչպէս նաեւ կը պակասեցնեն բոլոր տեսակի քոլեւսթերոլներուն քանակը: Սոյա ընդեղէնները միայն տեսքով կը նմանին լուրջիայի, սակայն, շատ աւելի մեծ է անոնց օգուտը:

Կարելի է երեխային սոյա կաթ տալ վեցերորդ ամսուանէ սկսեալ, որովհետեւ անոր մէջ գտնուող մակնեղիմի քանակը յիսուն անգամ աւելի է մօր կաթին, հետեւաբար կրնայ թունաւորել երեխան: Ամերիկեան ուսումնասիրութիւններ կ'ըսեն, թէ մեծ քանակութեամբ սոյա կաթ սպառող վեց ամսու երեխան չափազանց աշխուժ կրնայ դառնալ, եւ պատանեկութեան շրջանին կեղծանցումի պակաս կրնայ ունենալ:

Բնաթելերու մասին երեք համոզումներ կան, զորս յաճախ կը լսենք, բայց որոնք անշուշտ ճիշդ չեն: Առաջինը այն է, թէ փորհարութիւն կը պատճառեն: Բնաթելերը կրնան փորհարութիւն պատճառել միայն անոնց մօտ, որոնց աղիքները տկար են: Պիղուլներ ունենալու պարագային բնաթելերով հարուստ ուտելիքներ սպառելը անհրաժեշտ է, սակայն, եթէ անհատը պիտի չէ բնաթելերով հարուստ ուտելիքներ ուտելու, պէտք չէ մէկ անգամուան համար մեծ քանակութեամբ սպառել: Բնաթել կարելի է գտնել պտուղներուն, բանջարեղէններուն եւ ընդեղէններուն մէջ, որոնց օգուտը մեծ է մարմնին համար, սակայն, ինչպէս գիտենք, կրնան ստամոքսը ուսեցնել:

Բնաթելերուն մասին եղած երկրորդ համոզումը այն է, թէ մարմնին ծանրութիւնը կը պակասեցնեն: Իրականութիւնը այն է, թէ ժամանակի ընթացքին, շարունակական ձեռով բնաթել սպառելով ստամոքսի ուռեցքը կ'անհետանայ, մարմինը աւելի քիչ քանակութեամբ ճարպ կը սկսի ծծել եւ կը սկսի բնական շաքար ստանալ: Բնաթելերով հարուստ ուտելիքները երկար ժամանակ կը պահեն անհատը, սակայն, այս չի նշանակել, թէ ուղղակիորէն կը նուազեցնեն մարմնին ծանրութիւնը: Հաւասարակշռուած սննդականոնի հետեւողներուն համար, բնաթելով հարուստ ուտելիքները անհրաժեշտ են:

Երրորդ համոզումը այն է, թէ միշտ պէտք է ցորենի ամբողջ հունտը պարունակող թուխ հաց ուտել: Մասնազէտներ կը յանձնարարեն օրական երեսուն եւ երեսունհինգ կրամի միջեւ բնաթել սպառելը, սակայն, այլ հացի տեսակներ ալ պէտք է սպառել եւ ոչ միայն թուխ հացը: Միայն թուխ հաց ուտելով պատճառ կը դառնայ, որ մարմինը կորսնցնէ երկաթի եւ քալսիումի նման հանքերէն որոշ մաս մը:

ՔԱՐԼԱ ԵԱՐՏԵՄԵԱՆ



ԱՅՅԻԼ

AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ

ՄԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՑՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ

ԳՐԱՍԵՆՍԿ՝ ԱՅՅԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՔ, Բ. ՅԱՐԿ

ԳՏՆ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.





ներուն մէջ՝ հաւատարմով, թէ միշտ պէտք է կառուած մնալ աւանդական սովորութիւններուն, եւ վախճանաբար, որ եթէ որեւէ ձեւով փոփոխութիւն տեղի ունենայ կրնայ ազդել փոփոխութիւնը ու անոր ազ-

1990 թուականին, միջազգային կազմակերպութիւններու նախաձեռնութեամբ գումարուած համալսարանի ընթացքին, արարական պետութիւններու ներկայացուցիչները որոշեցին «Ուսման

Պատրաստեց ՆՈՐԱ ԲԱՐՏԵՂԵԱՆ



Կնոջական

ՃԻՇՂ, ԹԵ ՍԽԱԼ...

ՄՏՈՒԳԵՆՔ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

1

ԿԱՐԳ ՄԸ ՄՈՐԹԵՐ ԿԸ ՓՈՒՆԵՆ ԱՆՈՒՇԱՎՈՅՆ ԲՈՅՐԸ

ՃԻՇՂ, կարգ մը անձերու քրտինքին բաղադրուածքները պատճառ կ'ըլլայ,

որ անուշահոտ տարբեր ազդեցութիւն գործէ: Ահա թէ ինչո՞ւ նոյն անուշահոտ տարբեր անձերու վրայ տարբեր (հաճելի, նուազ հաճելի) բուրմունք կ'արձակէ:

2

ՄԱՉԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՆԱՆ ՅԱՃԱՆ ԿՏՐՈՒԵԼՈՎ

ՍԽԱԼ, որովհետեւ մաշկը իրենց ծայրամասերէն չէ որ կ'աճին, այլ գլխուն մորթին տակէն, հետեւաբար այս կարծիքը սխալ է: Կտրուած մազը պարզապէս աւելի խիտ եւ առատ կ'երեւի:

3

ՅԱՃԱՆ ԿԱՄՕՐԱՎԱՆ ԼՈՒԱՅՈՒՈՂ ՄԱՉԵՐԸ ԿԸ ԹԱՓԻՆ

ՍԽԱԼ, մասնաւորաբար գլխու իւղոտ մորթունեցողներուն պարագային, որքան յաճախ լուացւին մազերը, այնքան կը մաքրուին եւ բնականաբար առողջ կը մնան:

4

ԵԹԵ ԾԵՐՄԱԿ ՄԱՉ ՄԸ ՔԱՇԵՆՔ, ՀԱՆԵՆՔ, ՏԵՂԸ 10 ԾԵՐՄԱԿ ՄԱՉ ԿԸ ԲՈՒՄԻՆ

ՍԽԱԼ, քաշուած մազին տեղ միայն մէկ մազ կրնայ վերստին բուսնալ, եւ եթէ ճերմակ է, յաջորդն այլ կ'ըլլայ ճերմակ:

5

ԳԵՄՔԻՆ ՍԵՒ ԿԵՏԵՐԸ ՊԵՏՔ ՉԵ ՀԱՆԵԼ

ՍԽԱԼ, անոնցմէ պէտք է ձերբազատիլ, բայց զգուշութեամբ, որպէսզի մորթը չըրրոքի: Որեւէ սեւ կէտ մաքրելէ առաջ, նախ պէտք է օճառուիլ, եւ սպազայն սեղմելով՝ հանել թուղթէ թաշկինակի օգնութեամբ:

6

ՅՈՆ ՏԸ ԹԵՆԸ ԱՐԳԵԼՔ Կ'ԸԼԼԱՅ, ՈՐ ՄՈՐԹԸ ՇՆՉԵ

ՍԽԱԼ, մենք կը շնչենք մեր թոքերով եւ, մարմինն մնացեալ գործարաններուն նման, մորթին թթուածինը եւս կը հայթայթուի արեան կարմիր գնդիկներուն միջոցով, երակներուն ճամբով: Միւս կողմէ, որակաւոր ֆոն տը քեմները իրենց սերտուած բաղադրութեամբ չեն խցր մորթին ծակտիկները:

7


ՓՈՒՏՐԻ ԹԵԹԵՒ ԽԱՒ ՄԸ ԿԸ ԾԱԾԿԵ ԿՆՃՈՒՆԵՐԸ

ՍԽԱԼ, ընդհակառակը, փուտը աւելի եւս կը շեշտէ կնճիւնները՝ անոնց մէջ տեղաւորուելով: Այս անպատեհութիւնը շատ ցածր է: Համար ձեր զէմքին վրայ սփրեյով ջուր սրսկեցէք:

ՃԱԲԹՈՒԱՆ ՄԱՐՁԱՆԵՐ

ՃԿՈՒՆ ՉԵՌՔԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ


Մատու դաստակի դիրքին եւ արագ շարժումներով կրնանք ապահովել մեր ձեռքերուն ճկունութիւնը: Մեր զէմքն ետք մեր ձեռքերն են, որ խօսակիցին ուշադրութիւնը կը գրաւեն: Մեր ձեռքերը շատ բան կ'ըսեն մեր անձին մասին, հետեւաբար խնամենք զանոնք:




1.- Ձախ ձեռքին բութամատով եւ ցուցամատով բռնել աջին իւրաքանչիւր մատը եւ ծայրամասէն թեթեւօրէն քաշել: Նոյնը կրկնել աջ ձեռքով:



2.- Ձեռքերը զէմ դիմաց, տասը մատները զոյգ-զոյգ միացած, զանոնք մէկիկ-մէկիկ իրարմէ բաժնել՝ միաժամանակ իրարու վրայ ճնշելով:



3.- Ձեռքին եւ դաստակին միջեւ 90 աստիճան անկիւն մը կազմել մէկ ձեռքով միւս ձեռքին վրայ թեթեւօրէն ճնշելով: Շարժումը կրկնել 6-7 անգամ, ապա ձեռքերուն դիրքերը փոխել:




4.- Ձեռքերուն փափկացնող սեր թել, ապա մէկ ձեռքով մարմնի միւս ձեռքին երեսը, սկսելով ճկոյթ մատէն, հասնելով բութամատ: Ապա ձեռքերուն ուղղութիւնը փոխել եւ կրկնել մարմնումը:

ԵՂԱՆԱԿԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

ՉՄԵՐՈՒԿԸ

Շատ ջուր եւ քիչ ջերմութեամբ պարունակող ձմերուկը նաեւ ախորժաբեր, քաղցրահամ, հիւթեղ եւ յագեցնող է. ահա թէ ինչո՞ւ ամրան եղանակին ամէնէն փնտուած պտուղներէն մէկը կը նկատուի:



Մասնագէտներուն կարծիքով, նախընտրելի է զնել խոշոր ձմերուկը, որովհետեւ աւելի քաղցրահամ կ'ըլլայ, քան՝ 2-3 քիլօ կշռողը: Չկիտուած ձմերուկ մը մօտ մէկ շաբաթ կարելի է տան մէջ զով տեղ մը պահել: Կիսելէ ետք պէտք է անմիջապէս սառնարան փոխադրել՝ կիտուածին երեսը ցալընով ծածկելով:


Ձմերուկը հրամցնելու ձեւերը այլազան են. կարելի է մահիկաձեւ կտրել եւ կեղեւով միասին հիւրասիրել, կարելի է նաեւ կեղեւը եւ միջուկը խորանարդաձեւ կամ եռանկիւն կտրուելու հրամցնել:

Չմոռնանք նաեւ, որ ձմերուկին կեղեւը ինքնին շատ գեղեցիկ եւ ներկայանալի ամանի մը կարելի է վերածել՝ մէջը այլազան պտուղներով պատրաստուած աղցան լեցնելով:

Կարելի է նաեւ նոյն կեղեւին մէջ հրամցնել սաւկիլիա կամ փաւցի...


ՉՄԵՐՈՒԿԻՆ ԿԵՂԵՒԸ ԱՄԱՆԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Գնել 4-5 քիլօ կշռող ձմերուկ մը: Մէկ երրորդին վրայ թաղիք (feuile) մատիտով համաչափ զիկ-զակներ դնել, ապա հացի դանակով մը համբերութեամբ եւ ուշադրութեամբ այդ զիկ-զակներուն վրայէն անցնել:




Յատուկ դպրով մը միջուկը պատիկ գնդակներու պէս ձեւաւորելու եւ ապա օգտագործել պտուղի աղցանին մէջ, իսկ մնացեալ միջուկը խոշոր գլալի մը, ի հարկին դանակի մը օգնութեամբ պարպել: Նոյնը ընել նաեւ կափարիչին պարագային:

Մեծ բաժինին յատակէն բարակ շերտ մը կտրել, որպէսզի ձմերուկը ամանին մէջ հաստատուն մնայ: Վերջապէս, մէջը լեցնել պտուղի աղցանը եւ սեղան բերել:



ԽՈՒՍԱԳԻՐ

ՊԻՍՏԱԿԻ ԹԱՅԱՆՈՎ ՉՄԵՐՈՒԿ



Բաղադրութիւն՝ 4 անձի համար.


- 4 շերտ ձմերուկ
- Պղտիկ սեխ մը
- 8 հատ թարմ թուզ
- 8 գունդ պիստակի պաղպաղակ

Պատրաստութիւն.


Ձմերուկին շերտերը մաքրել եւ միջուկը խորանարդաձեւ կտրուել: Յատուկ դպրով մը սեխը կտրել գնդակներու վերածել: Թուզերը երկուքի կիսել: Բոլորը միասին խառնել: Իւրաքանչիւր ամանի մէկ ծայրը զնել ձմերուկին կեղեւը, վրան աւելցնել խառն պտուղները, իսկ կողքին՝ 2 կունդ պիստակի պաղպաղակ:

Բարի ախորժակ:

ԱՅԼԱԶԱՆ ՊՐԻԹՆԻ ՍՓԻՐՉ



22 տարեկան ամերիկացի երգչուհի Պրիթնի Սփիրօ վերջերս Նիւ Եորքի շքեղ պանդոկներէն մէկուն մէջ աճուրդի հանեց



իր անձնական իրերէն մաս մը: Աճուրդէն հասոյթը փոխանցուեցաւ իր անունը կրող բարեսիրական հաստատութեան, որ կ'օգնէ թշուառ երեխաներու:

Աճուրդի գրուած իրերէն յիշենք թանկագին քարերով գործուած հագուստ մը, պալէի կօշիկներ, լուսանկարներ, մանկութեան հագած հագուստներ եւ այլն...

Ա. ԿԵՆՍԱՆԻԹԻՆ ԶԱՓԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ՝ ՎՆԱՍԱԿԱՐ

Շուէտական ուսումնասիրութեան մը համաձայն, Ա. կենսասնիթի չափազանցութիւնը մեր մարմինն մէջ կը բազմապատկէ ոսկրային կոտորուածքներու հաւանականութիւնը, տրուած ըլլալով, որ անոր ազդեցութիւնը խոչընդոտ կը դառնայ Տէ. կենսասնիթի ազդեցութեան: Իսկ մեզի ծանօթ է, որ Տէ. կենսասնիթը կը զօրացնէ մեր ոսկորները:

Ուսումնասիրութեան համաձայն, այլազան սննդառութեամբ արդէն իսկ կարելի է ապահովել մեր մարմնին անհրաժեշտ Ա. կենսասնիթը եւ, հետեւաբար, կարիք չկայ յաւելեալ դեղահատեր գործածելու:

Ա. կենսասնիթ կը գտնենք կովու լեարդին, հաւկիթին, կաթնեղէններուն, ինչպէս նաեւ պէթաքարթէնի ձեւին տակ՝ ծիրանին, սեխին, սաեպղինին, շոմինին եւ խոշոր զգուճին մէջ:

ՔՈՒՆԸ ԿԸ ՆՊԱՍՏԵ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ

Գերմանիոյ Լուպէք համալսարանի մասնագէտ բժիշկներուն կարծիքով, գիշերուան մը հանգիստ եւ երկարատե քուն մը մեծապէս կը նպաստէ մեր յիշողութեան վերաշխուժուման:

Այս կէտէն մեկնելով, անոնք ուսանողներուն կը թելադրեն հրաժարիլ ամբողջ գիշեր մը արթուն մնալէ՝ դաս սերտելու կամ վերաքաղ ընելու պատճառաբանութեամբ, քանի որ անքնութիւնը կը սկստանայ իրենց միջոցութիւնը, նաեւ՝ կեղրոնացումի կարողութիւնը:

Անշուշտ ասիկա ուսանողներուն ուղղուած երազելու հրահր մը չէ...

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ




«ԱԶԳԱԿ»Ի ճԵՒ ԿԱՊՈՒԵԼՈՒ ԲԱՄԱՐ ԲԵՒԱՄԱՅԻՆԸ
 ԲԵՒԱՆԵԼԱՅ ԹԻՒԵՐՈՒՆԸ-
 258526, 260115 եւ 241274:

Պատրաստե՛ք ՇՈՒՇԿԻ ՄԱԻՒՍԱԳԱԼԵԱՆ

www.hamazkayin.com

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՄԻՋՅԱՄԱՔԱՍԱՍԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ

ԱՅՍՕՐ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԱՏՈՒՄՆԵՐԸ

Երկու օրո՞ւսան դադարէ հետք, այսօր տեղի կ'ունենան ֆուտբոլի միջնամաքամասային մրցաշարքի կիսաւարտական հանգրուանի մրցումները:

Առաջին մրցումը տեղի կ'ունենայ Լիոնի մէջ (Պէյ-րու՛լի Ժամով՝ 19:00ին), որուն ընթացքին Բ. խմբակի կարագլուխի դիրքը գրաւած Քամբուրն իր դէմ պիտի ունենայ Բոլոնիան, որ Ա. հանգրուանի մրցումները աւարտեց գրաւելով Ա. խմբակի երկրորդ դիրքը:

Մարզիչ Ֆրանչիսքո Մաթիւրանայի կազմը՝ Բոլոնիան պիտի անբախտ գտնուեցաւ, երբ մրցաշարքը հիւրընկալող երկրէն՝ Ֆրանսայէն 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց մրցաշարքի բացման օրը:

Կիսաւարտական երկրորդ մրցումը տեղի պիտի ունենայ Ժամով՝ 22:00ին, որուն ընթացքին Ֆրանսա պիտի ճակատի թուրքերի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ «Մթատ Տը Ֆրանս»-ի մէջ:

Մարզիչ Ժաք Սանթիսի կազմը պիտի փորձէ ամէն գնով նախ յաղթանակ արձանագրել, ապա գոհ ձգել իր համակիրները:

ՃԱՏԻՎ

ՎԼԱՏԻՄԻՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ ՈԶ ՀԱՍՈԶԻԶ ԱՐԴԻԻՆՔ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Հայաստանի ճատրակի լաւագոյն վարպետ Վլատիմիր Յակոբեան ոչ համոզիչ արդիւնք արձանագրեց, Ֆրանսայի մէջ ճատրակի միջազգային մրցաշարքին աւարտին զրաւելով ընդհանուր դասաւորման 9րդ դիրքը, միայն երեք կէտով: Վերջին հանգրուանի մրցումին, ան հաւասարութիւն մը արձանագրեց բրիտանացի Մայքըլ Էտրմանի հետ:

Ֆիտոգոսի արժանացաւ ուսուցիչ Պարէէ, որ 9 հանգրուանէն հաւաքեց 6,5 կէտ:

Յակոբեանը պարտութեան մատուցեց շարքին էր նաեւ Վիթթոր Բորչիոյ (Չեխոստան), որ սակայն մրցաշարքին աւարտին զրաւեց դասաւորման վերջին դիրքը՝ 2,5 կէտով:

● ԵՐԷԿ, Երեւանի մէջ սկսան Հայաստանի ճատրակի աղջկանց ախոյեանութեան մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն Հայաստանի տասը լաւագոյն վարպետները: Այլ մրցումները պիտի աւարտին յաւաքիկայ Յուլիա Յիւ:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆուտբոլի ազգային խումբին մաս կազմող Սարգիս Յովսէփեան շատ հաւանաբար Ձենիթ Մ. Փեթերսպուրկը լքելով միանայ Թորփետո Մոսկուայի: Հակառակ անոր, որ Ձենիթի պատասխանատուները ղեկավար են անոր իադարկութեան, անդին Թորփետոյի պատասխանատուները կ'ուզեն ձեռք ձգել Յովսէփեանի ստորագրութիւնը:

● ԵՒՐՕ-2004ի ֆուտբոլի մրցաշարքին Ուլքրանիոյ դէմ տեղի ունեցած մրցումին Սարգիս Յովսէփեանի ստացած դեղին քարտին համար, Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնին ներկայացուցած բողոքը մերժուեցաւ ԵՒՐՕ-ի Է. Է. Բ. Ա. կողմէ:

● ՇԱԲԱԹ 28 Յունիսին Երեւանի մէջ տեղի ունենալիք Կոտայք Արմիան - Պեոն (Չեխոստ) ինթերթոթո ֆուտբոլի մրցաշարքին Ա. հանգրուանի դարձի մրցումին իրաւարարը պիտի ըլլայ Մենկուայ Փրաթէս (Անտորրա), մինչ կողմի իրաւարարները պիտի ըլլան Կոնսայէս Պարպոսա (Փորթուգալ) եւ Լոփէս Հիտալիօ (Սպանիա):

● 2004ին տեղի ունենալիք մինի ֆուտբոլի աշխարհի ախոյեանութեան գտումի մրցումներուն իր մասնակցութիւնը բերող Հայաստանի ֆուտբոլի հաւաքակա՛նը, որ մաս կը կազմէ Թ. խմբակին, իրեն դէմ պիտի ունենան իւրուաթիւն են Հունգարիան:

Նոյեմբեր 4էն 10, իւրուաթիւն մէջ տեղի ունենալիք գտումի այլ մրցումներուն աւարտին առաջին դիրքը գրաւողը միայն պիտի ապահովէ յաջորդ հանգրուանին իր տոմարը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ԱՅՍՕՐ՝ Ը.Մ.Ը.Մ. - ՆԸԺՄԷ

Լիբանանի ֆուտբոլի բաժնի մրցաշարքի կիսաւարտական հանգրուանի դարձին իր կատարած մրցումին, երէկ Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ Լիբանանի ախոյեան Օլիմպիք 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Սալամի հետ, ապահովեց աւարտական մրցումին իր տոմարը: Երթին, Օլիմպիք հիւսիսի մայրաքաղաք Թրիփոլի մէջ 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց:

Կիսաւարտական հանգրուանի դարձի երկրորդ մրցումը տեղի պիտի ունենայ այսօր՝ Հինգշաբթի, դարձալ ժամը 8:30ին, որուն ընթացքին Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը պիտի ճակատի Նըժմէի դէմ:

Հակառակ անոր որ երթին նոյն այս դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ. 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Նըժմէին, սակայն այս մէկը չի նշանակեր, որ ան աւարտական մրցումին հասնելու յոյս չունի:

Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները յաղթելու վճռականութեամբ միայն դաշտ պիտի է ներկայանան այսօր Նըժմէի դէմ, այլապէս կարելի չէ յաղթանակ ապահովել:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի երթի մրցումին նման մեծաթիւ շարքերով ուղղուիլ Պէյրութի Քաղաքապետարանի դաշտ եւ ֆանֆարի ընկերակցութեամբ քաջալերել Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները:

ՈՒՒՄՊՈՒՆՆԵՐԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՔՈՒԷՐԹԷՆ, ՌՈՒՍԵՏՍՔԻ ԵՒ ՄԱԼԻԵԻԱ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

Ուիմպլերի թենիսի կրան շրջմի մրցաշարքին Բ. հանգրուանի երէկուսան մրցումներուն, թիւ 4 դասաւորուած գոլփերիայի Ռոժէ Ֆետերէր 7-5, 6-1 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք աւստրիացի Շիբեֆան Բուլպէր, հանդիսացաւ առաջին մարզիկը, որ ապահովեց Գ. հանգրուանին իր տոմարը, ուր կը մրցի ամերիկացի Մարտի Ֆիշի դէմ:




Ռոժէ Ֆետերէր

Աղջկանց Բ. հանգրուանի մրցումներուն, 12րդ դասուած պուլկարացի Մակտայենա Մարիելա գոլթու մնաց մրցաշարքէն, 2-6, 6-2 եւ 6-3 արդիւնքով պարտուելէ ետք արժանի թիւնցի Փաոլա Սուարէսէն:

Ստորեւ՝ երէկուսան Բ. հանգրուանի կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները:

Ֆարա Պլէք (Չիլի) - Տենիսա Շլաթովա (30րդ, Չեխոստ) 6-3 եւ 7-5

Բ. ՀԱՆԳՐՈՒՆԻ մրցումներուն, այսօր 6րդ դասուած արժանի հայ Դաւիթ Նալպանտեան կը մրցի պարագիլի Անտրէ Մայի դէմ, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան՝ ամերիկացի ձէյմս Պլէյթի դէմ (դասուած՝ 26րդ), իսկ գոլփերիայի Մարի - Գայեանէ Միքայէլեան՝ ամերիկացի ձենիթըր Բաֆրիայի դէմ (դասուած՝ 8րդ):



Փաոլա Սուարէս

ՏՂԱԲ Մարտի Ֆիշ (Մ. Ն.) - Ժան - Միշէլ Կամպիլ (Մ. Ն.) 6-4, 6-4 եւ 6-1

Ռայնըր Շուլթըր (9րդ դասուած, Գերմանիա) - (Սպանիա) - Միհայիլ Եուժնի (16րդ, Ռուսիա) 7-6, 6-3 եւ 6-2

Թոմի Ռոպրետո (25րդ, Սպանիա) - Պրայն Վահալի (Մ. Ն.) 6-4, 6-4 եւ 6-2

Էնտի Ռոտիք (5րդ, Մ. Ն.) - Կրէյ Իուստուսի (Բրիտանիա) 7-6, 7-6 եւ 7-5

Ճիւլի Սարբեթա (Պրագի) - Ալիսիո Քալեթի (23րդ, Արժանի) 6-4, 6-7, 6-2, 6-7 եւ 10-8

Վիթթոր Հանսեթի (Ռուսիա) - Իկնասիօ Շելա (32րդ, Արժանի) 6-2, 6-1 եւ 6-4

ԱՂՋԻԿՆԵՐ Նաթալի Տըլի (22րդ, Ֆրանսա) - Ռաֆա Պետանովա (Չեխոստ) 6-2 եւ 6-4

Չանտա Ռուպին (7րդ, Մ. Ն.) - Էյմի Ֆրայի (Մ. Ն.) 6-4 եւ 6-4

Վինչո Ուիլիամս (4րդ, Մ. Ն.) - Քաթարինա Սրեպիոնի (Սլովակիա) 6-4 եւ 6-1

Լինտոյ Տէվընփորթ (5րդ, Մ. Ն.) - Ռիթա Կրանտի (Իտալիա) 6-3 եւ 6-1

Ֆրանչիսքո Մարպի (2րդ, Պէյրութ) - Վիթթոր Ռայան (Ֆրանսա) 6-1 եւ 6-3

Ֆրանչիսքո Մարպի (2րդ, Պէյրութ) - Ամանաս Բուլպէր (17րդ, Հարաւային Աֆրիկէ) 4-6, 7-5 եւ 6-4

ՖԻՅԱԻ ԴԱՍԱԻՐՈՒՄ ՖՐԱՆՍԱ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ ՊՐԱՋԻԼԻ

Ֆիշան երէկ հրապարակեց ազգային խումբերու նոր դասաւորումը, ուր կատարուեցան կարգ մը փոփոխութիւններ:

Աշխարհի ախոյեան Պրագիլի թէլե մնաց պարագլուխի դիրքին վրայ, սակայն անոր անմիջական մրցակիցը՝ Եւրոպայի ախոյեան Ֆրանսա, բաւական մտեցաւ անոր, միջնամաքամասային մրցաշարքին Ա. հանգրուանին իր արձանագրած երեք յաղթանակներուն շնորհիւ: Անիկա այժմ 20 կէտով էտ կը մնայ Պրագիլէն:

Նոյն այս մրցաշարքին կիսաւարտական հանգրուանին իր տոմարը ապահոված Բոլոնիան եղաւ մեծագոյն ուսում արձանագրողը, բարձրանալով 17 դիրք (այժմ՝ 22րդ): Իր կարգին, Յունաստան կարեւոր ուսում մը արձանագրեց, երբ բարձրացաւ 33րդ դիրք (նախապէս՝ 45րդ):


Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը, սակայն, եղաւ նահանջողներու կարգին, 7 դիրք (նախապէս 105րդ): Երեքական դիրք նահանջեցին նաեւ Սուրիա (այժմ՝ 93րդ) եւ Լիբանան (այժմ՝ 121րդ):

● ՍՏՈՐԵԻ՝ առաջին քսան դիրքերը գրաւող եւ մեզ հետաքրքրող կարգ մը երկիրներուն դասաւորումը (փակագրի մէջ նշուած է անոնց անցեալ ամսուան դիրքը):

| | |
|------------------------|-------|
| 1. Պրագիլ (1) | 834 |
| 2. Ֆրանսա (2) | 814 |
| 3. Սպանիա (2) | 762 |
| 4. Արժանի (5) | 754 |
| 5. Հոլանտա (6) | 752 |
| 6. Գերմանիա (4) | 745 |
| 7. Ռուսիա (8) | 733 |
| 8. Անգլիա (7) | 727 |
| 9. Մ. Նահանգներ (10) | 717 |
| 10. Չեխիա (13) | 712 |
| 11. Իտալիա (12) | 711 |
| 12. Մեքսիկա (9) | 711 |
| 13. Դանիա (10) | 710 |
| 14. Ալբի (15) | 703 |
| 15. Փորթուգալ (14) | 692 |
| 16. Քամբուրն (18) | 691 |
| 17. Պելիք (16) | 672 |
| 18. Քոսթա Ռիքա (17) | 663 |
| 19. Շուէտ (20) | 663 |
| 20. Փարակուէյ (19) | 657 |
| 21. Ռուսիա (27) | 652 |
| 22. Քոլումբիա (39) | 651 |
| 23. Նորվեկիա (24) | 648 |
| 24. Ժապոն (23) | 643 |
| | |
| 30. Ռուսիա (25) | 627 |
| | |
| 33. Յունաստան (45) | 619 |
| | |
| 39. Եգիպտոս (44) | 606 |
| | |
| 41. Իրան (34) | 600 |
| | |
| 46. Սեուտ. Արաբիա (42) | 581 |
| | |
| 59. Սլովակիա (64) | 538 |
| | |
| 64. Իրաք (56) | 531 |
| | |
| 93. Սուրիա (90) | 445 |
| | |
| 112. ՀԱՅԱՍՏԱՆ (105) | 405 |
| | |
| 121. Լիբանան (118) | 379 |

ՔՈՒԷՐՈՉ՝ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏԻ ՄԱՐԶԻՉ

Մանչեսթըր Եունայթեդի օգնական մարզիչ փորթուգալցի Քարլոս Քուէրոյ երէկ նշանակուեցաւ Ռէալ Մատրիտի մարզիչ, որ այսպիսով յաջորդեց Վիլիեմսէ Տէլ Պոսքէի: Այս վերջինը իր ակումբին՝ Ռէալ Մատրիտի հետ ախոյեանութեան տիրանալէ մէկ օր ետք պաշտօնազրկուեցաւ ակումբին պատասխանատուներուն կողմէ: Հակառակ անոր որ 50 տարեկան փորթուգալցին տակաւին երկու տարուան պայմանագրութիւն մը ունէր ստորագրուած անգլիական խումբին հետ, սակայն մարզիչ Ալեքս Ենրիքսըն համաձայն գտնուեցաւ անոր մեկնումին: Քուէրոյ, որ երէկ Մանչեսթըրէն Ռէալ Մատրիտ ծամանելով յաջողեցաւ համաձայնութեան գալ Ռէալի նախագահ Ֆլորենտինօ Փերէսի եւ խումբին թէքնիք տնօրէն՝ Խորխէ Վալտանի հետ, մարզիչ իր նշանակումէն անմիջապէս ետք յայտարարեց, թէ սպանական կապիտէն իրեն ներկայացած առաջարկը յարկաւ նման է կեանքի ըն-



Քուէրոյ

թացքին միայն մէկ անգամ ներկայացած առաջարկի մը, որ մերժելու անհերքելի սխալ կարելի է սեպել:

